ՊԱՇՏՕՆԱԿԱՆ-Ք

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(մարտ 3–6, 2020 թ.)

Վեհափա՛ռ Տեր, Գերաշնո՛րհ սրբազան հայրեր, ԳՀԽ պատվարժա՛ն անդամներ,

Սույնով ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2019 թ. ամփոփ տեղեկագիրը։ Տեղեկագիրն ընդգրկում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցների, թեմերի եւ եկեղեցական հաստատությունների գործունեությունը։

1. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցելությունների եւ ընդունելությունների շրջանակներում ունեցել է 120-ից ավելի հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշակութային գործիչների հետ։

Նշենք դրանցից մի քանիսը՝

— հունվարի 30 — փետրվարի 10-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնել է Ավստրալիա՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանի եւ թեմական խորհրդի հրավերով։

— մարտի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիին։

— սեպտեմբերի 30-ին Վեհարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սինգապուրի վարչապետ Լի Սյեն Լունին եւ տիկին Հո Ջինին։

— հոկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա հայրապետական այցով մեկնել է Ժնեւ (Շվեյցարիա)։ Շվեյցարիայի «Կարմիր խաչի» նախագահ Թոմաս Հայնիգերի եւ ժնեւյան «Կարմիր խաչի» նախագահ Մատեոս Պեդրացինիի հրավերով Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցել է Շվեյցարիայի «Կարմիր խաչի» 2019 թ. միջոցառմանը, որն իրականացվել է «Պայծառացրեք մեր տարեցների կյանքը» նշանաբանի ներքո, եւ հավաքագրված միջոցները նպատակաուղղվել են նաեւ Հայաստանում կարիքավոր տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքին եւ զորակցությանը։

2. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

2019 թ. հրապարակվել է հայրապետական 41 կոնդակ, որոնցից 4-ով արքության պատիվ է շնորհվել Գերշ. Տ. Մովսես արք. Մովսիսյանին, Գերշ. Տ. Սիոն արք. Ադամյանին, Գերշ. Տ. Միքայել արք. Աջապահյանին եւ Գերշ. Տ. Սահակ արք. Մաշալյանին, 5-ը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 7-ը՝ «Ս. Սահակ — Ս. Մեսրոպ», 25-ը՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների տվչության առիթով։

Շնորհվել է հայրապետական 73 օրհնության գիր, խոսքեր են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք հանդիսությունների, միջոցառումների ու գիտաժողովների առիթով։

3. ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

2019 թվականին շարունակվել են փոխադարձ այցելությունները, նամակների փոխանակումները Նվիրապետական Աթոռների հետ։

Փետրվարի 19-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է ժամանել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արամ

Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը հանդիպումներ են ունեցել ՀՀ նախագահ տիար Արմեն Սարգսյանի եւ ՀՀ վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանի հետ։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը հանդիպել է նաեւ Հայաստանի եպիսկոպոսների հետ։

Ընդունված ավանդույթով՝ շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Նվիրապետական Աթոռների եկեղեցականների փոխայցելությունները։ Մայր Աթոռի միաբաններն այցելել են Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն՝ Սբ. Հարության եւ Սբ. Ծննդյան տոներին։ Միաժամանակ ուխտավորների խմբեր պարբերաբար այցելել են Երուսաղեմ ինչպես Հայաստանից, այնպես եւ արտերկրյա թեմերից։ Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներն այցելել են Մայր Աթոռ՝ մասնակցելու տարբեր միջոցառումների, համատեղ հանձնախմբերի նիստերի եւ քննարկումների։

Անցած տարին իրադարձություններով լի էր հատկապես Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության կյանքում։ Մարտ 8, 2019 թ. ի Տեր հանգավ Կ. Պոլսի լուսահոգի Պատրիարք Գերշ. Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը։ Հանգուցյալ Պատրիարքի հուղարկավորությունը նախագահել է Երուսաղեմի Հայ Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արք. Մանուկյանը, որ կատարել է վերջին օծումը։ Հուղարկավորությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցել են Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Գերշ. Տ. Սեպուհ արք. Զուլչյանը եւ Գերշ. Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, ինչպես եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ Գերշ. Տ. Նարեկ արք. Ալեմեզյանը եւ Գերշ. Տ. Խորեն եպս. Աշքարյանը։ Ներկա են եղել պետական այրեր, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ազգայիններ։

Հուլիսի 4-ին Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության պատրիարքական տեղապահի պաշտոնն է ստանձնել է Գերշ. Տ. Սահակ եպս. Մաշալյանը, որ դեկտեմբեր 11, 2019 թ. տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ընտրվել է Կ. Պոլսի Հայոց Պատրիարք։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հունվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը մասնակցել է Կոստանդնուպոլսի Հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Գերշ. Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի գահակալության արարողությանը եւ հունվարի 12-ին մատուցված անդրանիկ Սուրբ Պատարագին։ Մայր Աթոռի միաբան Գերշ. Տ. Եզնիկ

արքեպիսկոպոս Պետրոսյանն ընթերցել է նորընտիր Պատրիարքին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության եւ գնահատանաց գիրը, ապա հանձնել է Վեհափառ Հայրապետի կողմից ընծայված պանակեն։

4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 743 է, որոնցից 52-ը՝ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, 53-ը՝ ծայրագույն վարդապետ եւ վարդապետ, 23-ը՝ աբեղա, 479-ը՝ քահանա, 136-ը՝ սարկավագ։ Անցյալ տարի կատարվել են՝ մեկական քահանայական եւ սարկավագական ձեռնադրություններ, որոնց ընթացքում ձեռնադրվել են 12 ամուսնացյալ քահանա եւ 26 սարկավագ։ Մեկ վարդապետ ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան։ Կարգալույծ է հռչակվել 3 եկեղեցական՝ Տ. Խաչատուր աբղ. Կնյազյանը, Տ. Համբարձում աբղ. Արաբյանը եւ Տ. Նարեկ ավ. քհն. Իշխանյանը (1 ամուսնացյալ եւ 2 կուսակրոն քահանա)։

2019 թ. արտասահմանում ուսանող՝ Մայր Աթոռի միաբանների թիվը համալրվել է եւս 1-ով. Հոգեշնորհ Տ. Վաչե աբղ. Մկրտչյանը, Հռոմի Պապական Արեւելյան ինստիտուտում Եկեղեցական իրավունք ուսանելու նպատակով, մեկնել է Իտալիա։

Անցյալ տարվա տվյալներով՝ Մայր Աթոռի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1194 անձ։

5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցած տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվել է ԳՀԽ 3 ժողով (մարտ 12—15, հունիս 19—22, հոկտեմբեր 29 — նոյեմբեր 2)։

Մայր Աթոռում պարբերաբար գումարվել են նաեւ հայաստանյան եպիսկոպոսների հավաքներ։

Փետրվարի 26-ին՝ Ս. Ղեւոնդյանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել քահանայից ավանդական ամենամյա հավաքը, որին մասնակցեց շուրջ 230 եկեղեցական հայաստանյան թեմերից։ Վեհափառ Հայրապետի կողմից 19 քահանա արժանացավ լանջախաչ կրելու, իսկ 14-ը՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքի։

Բացի հիշյալ ժողովներից՝ գումարվել են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի եւ խորհուրդների ժողովներ՝ մասնավորապես իրենց աշխատանքներն են սկսել ԱԵԺ օրակարգային հարցերի նախապատրաստման համար ստեղծված հանձնախմբերը, որոնցում ներգրավված են համապատասխան ոլորտների մասնագետներ։

Կանոնավոր գումարվել են Վանական խորհրդի 98, Իրավախորհրդատվական հանձնախմբի 5, Կարգապահական հանձնախմբի 4, Վարդապետական եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնախմբի 2 եւ Ճարտարապետաշինարարական խորհրդի 5 հանդիպումները։

6. ԵԿԵՂԵՑԻ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետության հետ հարաբերությունների շրջանակներում Նորին Սրբությունը եւ Մայր Աթոռի բարձրաստիճան եկեղեցականները տարբեր ձեւաչափերի հանդիպումներ են ունեցել ՀՀ վարչապետի, նախագահի, ԱԺ նախագահի, նախարարների եւ ԱԺ պատգամավորների հետ։

Ս. Ծննդյան եւ Ս. Հարության տոների առիթով մատուցված հայրապետական պատարագներին իրենց մասնակցությունն են բերել իշխանության ներկայացուցիչները՝ ՀՀ նախագահ տիար Արմեն Սարգսյանը, ՀՀ վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանը, ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, կառավարության անդամներ եւ պատգամավորներ։

Հունվարի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց եւ օրհնության խոսք հղեց ԱԺ 7-րդ գումարման անդրանիկ նիստին։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ՀՀ վարչապետ տիար Ն. Փաշինյանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում 2019 թ. հունվարի 29-ին եկեղեցի–պետություն հարաբերությունները կանոնակարգելու նպատակով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով աշխատանքային խումբ։ Մայր Աթոռի կողմից աշխատանքների համակարգող է նշանակվել դիվանապետ Գերշ. Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, իսկ ՀՀ Կառավարության կողմից՝ վարչապետի աշխատակազմի ղեկավար տիար Էդուարդ Աղաջանյանը։

2019 թվականի մայիսի 3-ին Նորին Սրբության եւ ՀՀ վարչապետի նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀ եւ ՀԱՍԵ հարաբերություններին առնչվող հարցերով աշխատանքային խմբի առաջին նիստը, որի ընթացքում ամրագրվել են աշխատանքային խմբի հետագա գործունեության ելակետային սկզբունքները։ Աշխատանքային խմբի շրջանակներում, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Եկեղեցու եւ պետական գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձեւավորվել է թեմատիկ հինգ ենթախումբ՝ ա. Կրթական, բ. Պատմամշակութային հուշարձանների կարգավիճակ ունեցող սրբավայրերի, գ. Հարկային-մաքսային, դ. Օրենսդրական եւ ե. Հոգեւորականների զինապարտության առնչվող հարցերով։

7. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Մշակութային ոլորտում նշենք առավել նշանակալից միջոցառումները՝

— սեպտեմբերի 18-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի է ունեցել հիմնանորոգված Վեհարանի, Ս. Հայրապետաց մատուռի եւ նորակառույց հանդիսությունների սրահի բացման հանդիսավոր արարողությունը։ Վեհարանի համալիրի նորոգության ու կառուցապատման աշխատանքներն իրականացվել են ազգային բարերար Սամվել Կարապետյանի եւ Կարապետյան ընտանիքի սրտաբուխ նվիրատվությամբ։

— սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան օրը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում մեկնարկել է Վարդապետի 150-ամյակին նվիրված միջոցառումների շարքը։ Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելել է Կոմիտասի թանգարան, որտեղ հնչեցրել է թանգարանի զանգը՝ ազդարարելով հոբելյանական միջոցառումների մեկնարկը։

— հոկտեմբերի 9—10-ը, Ընտանիքի տարվա շրջանակներում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովը։ Համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ,

պետական այրեր, գիտնականներ եւ հասարակական գործիչներ Հայաստանից, Ռուսաստանից, Իռլանդիայից, Ավստրիայից, Բելգիայից եւ Ֆինլանդիայից։

— հոկտեմբերի 16—20-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը մասնակցել է ԳԴՀ Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում եւ նոյեմբերի 22—24-ը Երեւանում տեղի ունեցած գրքի միջազգային եւ տեղական ցուցահանդես-վաճառքներին։

— նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել գիտաժողով՝ նվիրված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակին։

— դեկտեմբերի 1-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանին։

— դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռի սարկավագաց երգչախումբը մեկնել է Եւրոպա՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին նվիրված համերգային շրջագայության։ Երգչախումբը ելույթներ ունեցավ Նիդեռլանդներում, Բելգիայում եւ Իտալիայում։

— դեկտեմբերի 5-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի է ունեցել Հայաստանի գրողների միության 85-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն։

— դեկտեմբերի 6-ին «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը կազմակերպել է «Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակություններում» խորագրով գիտաժողովը՝ նվիրված «Էջմիածին» ամսագրի հիմնադրման 75-ամյակին եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 2019 թ. «Ընտանիքի տարի» հռչակելուն։

8. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների ոլորտում իրականացված գործունեության շրջանակներում ուշագրավ են հետեւյալ իրադարձությունները։

Պաշտոնական, ինչպես նաեւ հոգեւոր-ճանաչողական եւ ուխտագնացության նպատակով Մայր Աթոռ են ժամանել՝

— մայիսի 7—15-ը՝ Սիդնեյի Սուրբ Մարիամ տաճարի դեկան, Սիդնեյի Կաթողիկե Արքեպիսկոպոսական թեմի արարողապետ, Տալինկհըրսթ եւ Նորֆոլկ կղզու ծխերի հովիվ ավագ քահանա Դոն Ռիչըրտսընը։

— մայիսի 11—17-ը՝ Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը (5 հոգի)։

— հունիսի 8—15-ը՝ Մինսկի եւ Զասլավսկի Պավել մետրոպոլիտը եւ իր երկու օգնականները (3 հոգի)։

— սեպտեմբերի 12—19-ը՝ Անգլիկան Եկեղեցու ավանդական թեւը ներկայացնող հոգեւորականները (26 հոգի)։

— դեկտեմբերի 22—24-ը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պաշտոնական պատվիրակությանը՝ Լեոնիդ արքեպիսկոպոսի գլխավորությամբ (3 հոգի)։

էկումենիկ-միջկրոնական ժողովներ.

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակել է իր ակտիվ գործունեությունը՝ իր մասնակցությունը բերելով էկումենիկ եւ միջկրոնական ժողովներին եւ քննարկումներին։ Մասնավորապես՝

— մայիսի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Շարժայի պետական տեղեկատվական բյուրոյի ընդհանուր նախագահ Շեյխ Սուլթան բին Ահմեդ Ալ-Քասիմիի հրավերով, 2019 թվականն իբրեւ ԱՄԷ-ում կրոնական հանդուրժողականության տարի հռչակելու առիթով Շարժա կատարած այցի ընթացքում հանդիպում է ունեցել Շարժայի կառավարիչ Շեյխ Դր. Սուլթան բին Մուհամմադ Ալ-Քասիմիի հետ,

— սեպտեմբերի 15—17-ը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում Սանտ էջիդիո համայնքի կողմից կազմակերպված «Խաղաղության աղոթքի» միջազգային ժողովին մասնակցել է Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը,

— հոկտեմբերի 18—20-ը Սկոպյեում կայացած Կրոնների եւ քաղաքակրթությունների միջեւ երկխոսության 5-րդ համաշխարհային համաժողովին մասնակցել է Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը,

— հոկտեմբերի 22—25-ը Հյուսիսային Իռլանդիայի Բելֆաստ քաղաքում կայացած եպիսկոպոսների էկումենիկ 38-րդ ժողովին Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնից մասնակցել են Գերշ Տ. Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանը եւ Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը։

— հոկտեմբերի 30-ին Մոսկվայում կայացած Ռուսաստանի հարանվանությունների կրոնական խորհդի 6-րդ համագումարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցել են Գերշ. Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Գերշ. Տ. Եզրաս արք. Ներսիսյանը։

9. ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ընդհանուր թվով ուսանում է 137 սան, որոնցից 90-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, 38-ը՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, 9-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում։

Ճեմարանի սաները մասնակցել են մշակութային տարբեր միջոցառումների (համերգ, օպերա, այցելություն թանգարաններ եւ այլն), կազմակերպվել են դասախոսություններ եւ սեմինար-հանդիպումներ Հայաստանից եւ արտերկրից ժամանած մասնագետների հետ, մասնավորապես՝

— սեպտեմբերի 19-ին՝ Գերմանիայի նախկին նախագահ, նախկին լյութերական քահանա, Հայոց ցեղասպանության ընդունման աջակից, Յոախիմ Գաուկի հետ,

— սեպտեմբեր 30-ին՝ Գյոթինգենի «Գեորգ Ավգուստ» համալսարանի էկումենիկ աստվածաբանության եւ Արեւելյան Եկեղեցիների պատմության պրոֆեսոր Մարտին Թամքեի հետ՝ «Հայ Եկեղեցուն վերաբերող հետազոտությունները գերմանական ակադեմիական միջավայրում» թեմայով,

- հոկտեմբերի 31-ին՝ սեմինար-հանդիպում Հունգարիայի Պիտեռպոզնան համալսարանի Եկեղեցական կանոնագիտության եւ պատմության դոկտոր հայր Անսելմ Սզուրոմիի հետ՝ «Առաքինության ուսմունքը հայրաբանության մեջ» թեմայով։

10. ԿՐԹԱԿԱՆ, ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռը շարունակել է ընդգրկուն գործունեություն իրականացնել հանրակրթության ոլորտում, երիտասարդների

շրջանում, հայորդյաց տներում, զինված ուժերում եւ քրեակատարողական հիմնարկներում։

ա. Հանրակրթության ոլորտ

Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ՔԴԿ) անցյալ տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունը նախադպրոցական, միջնակարգ եւ կիրակնօրյա կրթության ոլորտներում՝ մասնավոր ուշադրություն դարձնելով Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդմանը։ Ուսուցիչների որակավորումը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է1 7 սեմինար դասախոսություն՝ նվիրված Հայոց Եկեղեցու դավանանքին, խորհուրդներին, տոներին, բարեպաշտական սովորություններին։ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հետ դպրոցներում անցկացվել է աստվածաշնչյան գիտելիքների վիկտորինա, կազմակերպվել են ՀԵՊ առարկայի մարզային եւ հանրապետական օլիմպիադայի փուլերը։ ՀՀ գրեթե բոլոր դպրոցներում ՔԴԿ նախաձեռնությամբ մեծ շուքով նշվել են Կոմիտաս վարդապետի, Հովհաննես Թումանյանի 150 եւ Գեւորգ Էմինի 100 ամյակները։ Մայր Աթոռի ֆինանսավորմամբ տպագրվել եւ բաժանվել են 2—4-րդ դասարանների գիրք-տետրերը։

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 34 դասարաններում ուսանում է 501 աշակերտ։ Դպրոցում կազմակերպվել են մի շարք գրական, մշակութային միջոցառումներ, որոնց նպատակն է եղել զարգացնել աշակերտների մտահորիզոնը, ձեւավորել գեղագիտական ճաշակ եւ ազգային մտածողություն։ Այս նպատակով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել մտավորականների, ճանաչված եւ սիրված մարդկանց հետ, դպրոցի աշակերտները մասնակցել են միջազգային տարբեր մրցույթների եւ արժանացել մրցանակների։

Հառիճի Թրբանճյան ընծայարանում (ավագ դպրոց) 2018—2019 ուստարում ուսանել է 28 աշակերտ։ Ընծայարանի սաները մասնակցել են առարկայական օլիմպիադաների՝ Հայ Եկեղեցու պատմություն եւ Հայոց պատմություն առարկաներից։ Ինչպես շրջանային, այնպես էլ մարզային փուլերում հիմնականում զբաղեցրել են մրցանակային տեղեր։ Ընծայարանում սերտ է կապը նաեւ ծնողների հետ։ Անցկացվել է ծնողական երկու ժողով, որոնցում քննարկվել են ծնողներին եւ սովորողներին հուզող տարատեսակ հարցեր։

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում ուսանում է 64 աշակերտ (24 աղջիկ եւ 40 տղա) Հայաստանից, Իրանից, Իրաքից, Մյանմարից, Ռուսաստանից եւ Հնդկաստանից։ Կրթության որակը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են անգլերենի, բնագիտական եւ հայագիտական առարկաների հավելյալ դասընթացներ, նշվել են ազգային-եկեղեցական տոները, երեխաները կանոնավոր մասնակցել են Ս. Պատարագներին։ Բարելավվել են դպրոցի շենքային պայմանները, շուտով կբացվեն համակարգչային եւ ժողովական նոր դասարանները։ 2021 թ. ճեմարանը պատրաստվում է նշել հիմնադրման 200-ամյակը, որի նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են։

Հանրակրթական հաստատությունների շարքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործում է նաեւ «Էօրնեկեան մանկապարտեզ»-ը, որտեղ հաճախում է 3—5 տարեկան 47 երեխա։ Մանկապարտեզում համապատասխան ծրագրով երեխաներին մատուցվում են ազգային եւ հոգեւոր գիտելիքներ, աշխատանքներ են իրականացվում նրանց ազգային կրթության ու դաստիարակության ուղղությամբ։ Մեծ կարեւորություն է ընծայվում սանիտարահիգիենիկ պայմաններին եւ թարմ սննդի ապահովմանը։

բ. Քարոզչություն երիտասարդների շրջանում

Անցյալ տարի Հայ Եկեղեցու Երիտասարդաց միավորումը (ՀԵԵՄ), կազմակերպել է տարբեր գիտաժողովներ եւ ուխտագնացություններ Հայաստանի սրբավայրեր։ Մասնակցություն է ունեցել հանրային տարբեր միջոցառումներին։ Մասնավորապես՝

— ապրիլի 30-ին, ի գնահատումն հայրենիքին մատուցած նվիրյալ ծառայության, Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական միավորումը դրամական օգնություն է փոխանցել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի հաշմանդամություն ունեցող 10 նախկին զինծառայողի։

— հուլիսի 4—7-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կայացավ Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) «Դեպի Սուրբ Էջմիածին, դեպի սրբազան Արցախ» համահայկական ուխտագնացությունը, որը համախմբել էր շուրջ 350 ուխտավորի։ ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակի հրավերով՝ համահայկական հավաքի տարբեր

հանգրվաններին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության պաշտոնատար անձեր։ Հանդիպման ընթացքում երիտասարդական միությունների ներկայացուցիչները ոլորտի առաջատար փորձագետների հետ քննարկեցին իրենց գաղափարներն ու նախաձեռնությունները։

— Նոյեմբերի 2—3-ը ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակում կայացավ առաջին ՀԵՀԵՄ ատենապետաց ժողովը։ Ատենապետաց ժողովին իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի եւ Սփյուռքի թեմերի թեմական առաջնորդներ, երիտասարդական կառույցների ատենապետեր, ներկայացուցիչներ, պետական այրեր։

գ. Հայորդյաց տներ

Մայր Աթոռի քարոզչությունն իրականացվում է նաեւ 7 հայորդյաց տների (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երեւանում՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր) եւ Մանրանկարչության արվեստի կենտրոնի միջոցով։

Հայորդյաց տներում, ուր հաճախել է շուրջ 5000 երեխա, կազմակերպվել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ եւ այլ ծրագրեր։ Սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված ազգային-եկեղեցական եւ պետական տոներին։

դ. ՀՀ Զինված ուժեր

ՀՀ Զինված ուժերում (ԶՈՒ) իրենց ծառայությունն է բերում 69 հոգեւոր սպասավոր՝ 1 եպիսկոպոս, 16 քահանա եւ 52 սարկավագ։ Անցած տարում ՀՀ Զինված ուժերում կատարվել են տոնական միջոցառումներ եւ ջրօրհնյաց արարողություններ՝ զինվորներին Ս. Ծննդյան տոնի խորհրդին հաղորդակից դարձնելու նպատակով։ Գնդերեցների ծառայության շնորհիվ մկրտվել է 580 զինծառայող։

Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 27-ամյակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Վարդան Մամիկոնյան եւ Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռում մատուցված Սուրբ Պատարագից հետո օրհնվեցին «Աշոտ Երկաթ Խաչ» կրծքանշանները, որոնք բաժանվել են ՀՀ Զինված ուժերի ծառայողներին։

ՀՀ Զինված ուժերի բարձրաստիճան 8 սպա արժանացավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն՝ հայրապետական «Սուրբ Ներսես

Շնորհալի» շքանշանին, իսկ ՀՀ պաշտպանության նախարար տիար Դավիթ Տոնոյանի կողմից գերատեսչական մեդալներով պարգեւատրվեց 11 գնդերեց։

Պարբերաբար կազմակերպվել են ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի զինվորների եւ սպայական կազմի այցելությունները Մայր Աթոռի թանգարաններ։

Հունվարի 28-ից փետրվարի 1-ը Լեհաստանի Կրակով քաղաքում Բանակի հոգեւոր առաջնորդը մասնակցել է «Հովվական խնամքը զինծառայողների համար. անցյալի փառքի եւ ապագայի մարտահրավերների միջեւ» խորագրով՝ Հյուսիսատլանտյան Ռազմական Դաշինքի (NATO) անդամ եւ համագործակցող երկրների Զինված ուժերի հոգեւոր առաջնորդների միջազգային 30-րդ համաժողովին։

Գնդերեցներն իրենց ծառայության ընթացքում մտերմություն են հաստատում զինծառայողների հետ, պարբերաբար անհատական զրույցներ են ունենում զինվորների եւ սպայական կազմի հետ, հասու լինում նրանց խնդիրներին ու դժվարություններին։ Նրանց առաքելությունն է՝ հետեւողական աշխատանքով օգտակարություն բերել Հայոց բանակի մարտիկների առողջ հոգեվիճակի ձեւավորմանը եւ նրանց հոգիներում հայրենասիրության ու եղբայրասիրության ամրապնդմանը։ Հոգեւոր սպասավորները ջանում են զինծառայողների շփումներում ամրապնդել բարեվարքությունը, ինչպես նաեւ կանխել զինծառայողների մասնակցությամբ բռնարարքի եւ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների, հայհոյանքի, խմիչքի, թմրամոլության ու խաղամոլության դեպքերը եւ դրանց հետեւանքով առաջացող արտակարգ պատահարները։ 2018–2020 թթ. ընթացքում ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցների կողմից նախանշվել, հայտնաբերվել եւ կանխվել են բռնարարքի եւ ոչ կանոնագրքային փոխհարաբերությունների ակնառու մի շարք դեպքեր։

Ե. Քրեակատարողական հիմնարկներ

ՀՀ քրեակատարողական (ՔԿՀ) 12 հիմնարկներում իրենց հոգեւոր սպասավորությունն է բերում 11 հոգեւորական՝ 1 վարդապետ, 9 քահանա եւ 1 սարկավագ։

Աշխատանքներ եւ տարատեսակ օժանդակություններ են իրականացվել ոչ միայն դատապարտյալների, այլ նաեւ նրանց ընտանիքների եւ նախկին դատապարտյալների համար։ Առանձին աշխատանքներ են

տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ, ինչի շրջանակներում տրամադրվել է հոգեւոր գրականություն, եւ անցկացվել են հոգեւոր զրույցներ։

զ. Հրատարակչություն, զանգվածային լրատվության միջոցներ

Հավատացյալների հոգեւոր կարիքները բավարարելու նպատակով համապատասխան գրականության լույս ընծայումներով քարոզչություն է իրականացվել նաեւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից։ Անցյալ տարում տպագրության է հանձնվել 27 անուն գիրք։

Կանոնավոր կերպով տպագրվել են «Էջմիածին» ամսագիրը, «Քրիստոնյա Հայաստան» թերթը, ինչպես նաեւ քարոզչություն է իրականացվել համացանցի, հեռուստառադիո հաղորդաշարերի եւ «Շողակաթ» ու «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով։

Մայր Աթոռի թանգարաններ է այցելել 61 931 անձ։

Հաշվետու ժամանակաշրջանում նվիրատվությունների եւ գնումների շնորհիվ «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանը ձեռք է բերել 2523 միավոր նոր գրականություն։ Շարունակվել են գրքերի քարտային եւ էլեկտրոնային մատենագիտական նկարագրությունների մշակման, ընթերցողների սպասարկման եւ գրքերի թվայնացման ամենօրյա բնականոն աշխատանքները։

11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցնած տարում Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայությունների գրասենյակի, Հայաստանի ու Արցախի թեմերի համապատասխան կառույցների կողմից իրականացվել են ընդհանուր 1 175 000 դոլարին համարժեք 558 211 581 ՀՀ դրամի բարեգործական եւ սոցիալական ծրագրեր։ Մասնավոր ուշադրություն է դարձվել ազգաբնակչության կարիքավոր խմբերին՝ փախստականներին, սիրիահայերին, իրաքահայերին, ազատամարտիկներին, զոհված զինվորների ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, տարեցներին, ուսանողներին եւ հիվանդներին։

24 050 000 դրամ աջակցություն է ցուցաբերվել Լիբանանի հայոց թեմին,

50 163 620 դրամ է տրամադրվել «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամին»,

2 500 000 դրամի կրթաթոշակ է տրամադրվել սահմանամերձ գյուղերի ուսանողներին,

4 592 000 դրամ է տրամադրվել ՀՀ սահմանամերձ բնակավայրերում բնակվող երեխաներին։

1663 ընտանիքների ցուցաբերվել է դրամական օգնություն, իրային աջակցությունն է ստացել 6223 ընտանիք, անխափան աշխատել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԲՀՄ հովանավորության ներքո գործող բարեգործական 5 ճաշարանները (3-ը՝ Երեւանում, 1-ը Էջմիածնում, 1-ը՝ Վանաձորում) , ամենօրյա սնունդ է ստացել շուրջ 900 անձ։

Իզմիրլյան ԲԿ-ում իրականացվել է «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագիրը, որից օգտվել է 292 սիրիահայ, իսկ «Ծաղկազարդը Մայր Աթոռում» բարեգործական ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ է այցելել Հրազդանի երեխաների աջակցության հիմնադրամի ցերեկային կենտրոնի շուրջ 120 երեխա՝ ստանալով Վեհափառ Հայրապետի օրհնությունը։ Մայր Աթոռի կողմից կենտրոնը նաեւ ստացել է դրամական աջակցություն։ Գումարային աջակցություն է ստացել նաեւ գլխուղեղի հիվանդությամբ տառապող երեխաներ ունեցող 10 ընտանիք։

Ս. Ծննդյան առթիվ Նորին Սրբությունն այցելել է Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն՝ աջակցություն բերելով արյան լեյկոզով տառապող փոքրիկներին եւ նրանց ընտանիքներին։

12. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խորվիրապ, Ս. Գեղարդի եւ Սեւանա վանքերը։ Հիշյալ եկեղեցական կառույցներում անցած՝ 2019 թ. կատարվել են 6077 մկրտություն եւ 2056 պսակադրություն։

13. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում են 33 թեմ եւ 3 հայրապետական պատվիրակություն, գործում են 649 եկեղեցի ու վանք, 812 ծուխ եւ ծխական առաքելություն, 263

կիրակնօրյա դպրոց, նաեւ տիկնանց 74 եւ 113 երիտասարդաց միութիւններ։ Անցած տարում ընդհանուր առմամբ կատարվել են 39 450 մկրտություն եւ 10 094 պսակադրություն։

Թեմերը 2019 թ. իրականացրել են հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր։ Թեմերի հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, իսկ քարոզչադաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց, երիտասարդաց միությունների հավաքներ, երգչախմբեր, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր թեմայով մրցույթներ, հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ։ Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են տեսել թեմերի պաշտոնական թերթեր։

Հաշվետու տարում արդյունավոր են եղել նաեւ եկեղեցաշինական աշխատանքները։ Հայ Եկեղեցու թեմերում նախորդ տարում օծվել է 19 եկեղեցի, որոնցից՝ 2-ը՝ Արարատյան հայրապետական թեմում, 2-ը՝ Շիրակի թեմում, 1-ը՝ Գուգարաց թեմում, 2-ը՝ Արագածոտնի թեմում, 2-ը՝ Գեղարքունյաց թեմում, 1-ը՝ Տավուշի թեմում, 3-ը՝ Կոտայքի թեմում, 2-ը՝ Սյունիքի թեմում, 2-ը՝ Արցախի թեմում, 1-ը՝ Վիրահայոց թեմում, 1-ը՝ Իրաքի հայոց թեմում։

Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում թեմերում գործող հիմնադրամների միջոցներով սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անպահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին ու զոհված զինծառայողների ընտանիքներին։ Սոցիալական ոլորտում համագործակցությունը շարունակվել է պետական կառույցների, բարեգործական հիմնադրամների եւ հասարակական կազմակերպությունների հետ։